26 փետրվարի, 2018թ. Երևան

**Այսուհետև հասարակական կազմակերպությունները պարտավորություն չունեն իրենց կանոնադրությունները համապատասխանեցնելու ՀԿ-ների մասին օրենքի դրույթներին և վերագրանցելու**

Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակում փետրվարի 23-ին կազմակերպված դասընթացին քաղհասարակության կազմակերպության (ՔՀԿ) ներկայացուցիչ հիմնարար գիտելիքներ ստացան «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում կատարված փոփոխությունների մասին:

Ներկայումս Վերջին փոփոխությունների համաձայն՝ ներկայումս հասարակական կազմակերպությունները պարտավորություն չունեն իրենց կանոնադրությունները համապատասխանեցնելու օրենքի դրույթներին և վերագրանցելու իրավաբանական անձանց պետական ռեգիստրում: Այս մասին դասընթացի մասնակիցներին հայտնեց դասընթացավար, «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի ինկուբատորների համակարգող Մարատ Ատովմյանը:

Նա նշեց, որ ներկայումս չի նախատեսվում որևէ պատասխանատվություն՝ կանոնադրությունը օրենքին չհամապատասխանեցնելու համար և իրավաբանական անձանց պետռեգիստրում գրանցելու համար: Սակայն այդ գրանցելու դեպքում այժմ գանձվում է 5000 դրամ պետական տուրք:

Դասընթացին ներկայացրվեցին նաև ՀԿ օրենսդրության նոր կարգավորումները, որոնք վերջին մեկ տարվա ընթացքում կիրառելի դարձել՝ կապված նոր օրենքի ընդունմամբ:

«Ներկայացվեցին այն առանցքային փոփոխությունները, որոնք կատարվել էին ՀԿ օրենսդրական դաշտում: Ինձ համար շատ կարևոր էր, որ իմացանք կամավորների մասին կատարված փոփոխությունները, որովհետև մենք հաճախ ունենում ենք կամավորներ, և հիմա ուշադիր կլինենք, որ այդ կամավորների հետ ունենանք պայմանագիր»,-ասաց «Եվրասիա Համագործակցություն» հիմնադրամի ներկայացուցիչ Սիլվա Սվազյանը:

«Բժիշկների կատարելագործման միջազգային ակադեմիա ՀԿ նախագահ Դիանա Հովակիմյանի խոսքով, նման դասընթացներն արդյունավետ են պետք է շարունակական լինեն. «Եթե օրենքին իրազեկված ես, ապա կկարողանաս ճիշտ աշխատել և խնդիրներ չեն առաջանա»,- նշեց նա:

Նշենք, որ դասընթացի մասնակիցների հիմնական մասը կանայք և երիտասարդ ակտիվիստներ էին:

Եթե Դուք նույնպես քաղակտիվիստ եք և ցանկություն ունեք իրավաբանական աջակցություն ստանալու, ապա դիմեք մեզ info@armla.am հասցեով՝ առաջիկա դասընթացին գրանցվելու և իրավաբանական խորհրդատվություն ստանալու համար:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն

Հեռախոս՝ +37410 54 64 94

Իրավաբանների հայկական ասոցիացիա

Հասցե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս՝ +37410 54 01 99

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:

***«Կառուցողական երկխոսության հանձնառություն»*** ծրագիրն իրականացվում է ԵՄ ֆինանսավորմամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից գործընկերներ «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա), «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի, «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի և «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միության հետ համագործակցությամբ:

Ծրագրի նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և դրանց կոալիցիաների/ցանցերի ազդեցությունը հանրային քաղաքականության մշակման գործընթացի վրա: Սա հնարավորություն կտա կազմակերպություններին (ովքեր արդեն իսկ աշխատում են թիրախային կոալիցիաներում) ձեռք բերել նոր ռեսուրսներ, քաղհասարակության փորձագետներին միավորել և խրախուսել իրենց մասնակցությունը տեղական և ազգային քաղաքականությունների օրակարգի ձևավորմանը, հատկորոշել ընդհանուր խնդիրներն ու առաջնահերթությունները և դիմել կառավարությանը՝ կառուցողական և ռազմավարական քաղաքականության վերաբերյալ նախաձեռնություններով:

Ծրագրի շրջանակներում ենթադրամաշնորհներ կտրամադրվեն ՔՀԿ-ներին և ՔՀԿ-ների կոալիցիաներին, որոնք կուղղվեն հանրային քաղաքականությունների զարգացմանն ու կունենան շոշափելի արդյունքներ 9 թիրախային ոլորտում, որոնցից են արդարադատությունը, կրթությունը և բիզնեսը:

**Իրավաբանների հայկական ասոցիացիան (ԻՀԱ)** ստեղծվել է 1995թ.-ին: ԻՀԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունն իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված: Մինչև 2016 թ. փետրվար ամիսը ԻՀԱ-ի անվանումն էր Հայասատանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա:

**Աստղիկ Կարապետյան**
**Հանրային կապերի համակարգող**

**Հեռ.՝ 540199**
**Էլ. Հասցե՝ info@armla.am**
**Կայք՝ http://www.armla.am, http://ccd.armla.am**

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն

Հեռախոս՝ +37410 54 64 94

Իրավաբանների հայկական ասոցիացիա

Հասցե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս՝ +37410 54 01 99

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուժերը: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ: